

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Քրիստինե Ասատրյանի ելույթը.

Ողջունում եմ ձեզ, Հայաստանի Հանրապետության ազատ, հպարտ և հեղափոխական երիտասարդներ:

Շատ ուրախ եմ, որ «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի բացման շնորհիվ Գյումրին դառնում է իմ առաջին մարզային պաշտոնական այցելության հյուրընկալողը: Բոլորիս է հայտնի, որ Գյումրուց է սկսվել թավջա հեղափոխության առաջին քայլերը և հեղափոխության օրերին Գյումրեցի երիտասարդները մասն են եղել ամբողջ Հայաստանում քաղաքացիական ակտիվություն իրականացնող մի մեծ երիտասարդական շարժման: Նմանատիպ քաղաքացիական ակտիվությունը ապացուցեց, որ երիտասարդները մեր ներկան են և այդ իսկ պատճառով ինձ համար մեծ պատիվ և պատասխանատվություն է զբաղվել Հայաստանի համար կարևորագույն ոլորտներից մեկով՝ երիտասարդական քաղաքականությամբ:

Ուզում եմ այսօր հատուկ կարևորել, որ նոր կառավարության և մեր նախարարության համար առաջնահերթություն է մարզային և հատկապես գյուղական երիտասարդների կարիքների վերհանումը և խնդիրների լուծումը: «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի բացումը ուղակիորեն կապված է նախարարության առաջնահերթությունների հետ, որի իրականացման համար գնահատում եմ «Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրիում երիտասարդների հզորացում» ծրագրի դերը՝ կարևորելով ԵՄ աջակցությունը և համագործակցությունը, որը նույնպես բխում է ՀՀ կառավարության առաջնահերթություններից:

Նմանատիպ երիտասարդական կենտրոններ յուրաքանչյուր մարզում, քաղաքում, գյուղում ունենալը երազանք է, որ պետք է վերածվի նպատակի, և հույս ունեմ, որ այդ նպատակը շատ շուտով իրականություն կդառնա, ինչպես դարձավ Գյումրիում՝ երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի ակտիվ աշխատանքի շնորհիվ:

Խոսքս կուզեմ ավարտել խորհրդով և հորդորով՝ հպարտ երիտասարդներ՝, օգտվեք «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի ընձեռած բոլոր հնարավորություններից, զբաղվեք ինքնազարգացմամբ, կրթվեք և նաև կրթեք, մոտիվացվեք իրարով և ձեր երազած կյանքը նոր Հայաստանում իրականություն կդառնա: